# Նոբելյան ինստիտուտում «Ա1+»-ին մրցանակ կհանձնվի

Մարտ 3, 2011
Նոբելյան ինստիտուտում «Ա1+»-ին մրցանակ կհանձնվի
A1plusaward.jpg [1]

«Ա1+» ինտերնետային կայքը մեկն է այն վեց մրցանակակիրներից, որին այս տարի հունիսի 15-ին Նորվեգիայի Նոբելյան ինստիտուտում կհանձնվի Fritt Ord Press Prize-2011-ը:

Fritt Ord (Օսլո) եւ ZEIT (Համբուրգ) հիմնադրամների որոշմամբ այս տարի խոսքի ազատության մրցանակին են արժանացել Ռուսաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան եւ Բելառուսը ներկայացնող 4 լրագրող, ռուսական «Չեռնովիկ» շաբաթաթերթը(Դաղստան) եւ հայկական «Ա1+» կայքը: (Հաղթողների մասին առավել մանրամասն՝ մեր կայքի անգլերեն էջում ):

Մրցանակը տրվում է մամուլի ազատության ամրապնդմանը ներդրված ջանքերի համար՝չնայած ճնշումներին եւ ֆինանսական դժվարություններին:

«Ա1+»-ի թեկնածությունը առաջադրել են Օսլոյի Մարդու իրավունքների տունը եւ Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեն:

Մամլո հաղորդագրության մեջ նշվում է, որ «Ա1+»-ը լուսաբանում է ընդդիմության գործողությունները, կառավարության, խորհրդարանի, հասարակական կազմակերպությունների աշխատանքը, ներկայացնում տարբեր գնահատականներ եւ տեսակետներ, ապահովում ինտերնետ հեռարձակում:

Որոշումը կայացրել է 8 հոգանոց անկախ ժյուրին, որի կազմում եղել են 5 ներկայացուցիչներ Գերմանիայից, մեկական Թուրքիայից, Դանիայից, Նորվեգիայից:

«Ա1+»-ին իբրեւ մրցանակ կհանձնվի 10000 եվրո:

Այս մրցանակաբաշխությունը կազմակերպվում է Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի լրատվամիջոցների եւ լրագրողների շրջանում 2000թ-ից ի վեր:

Հայկական լրատվամիջոցներից «Ա1+»-ն առաջինն է, որն արժանանում է այս մրցանակին:

Հայաստանից որպես անհատ լրագրողներ այս մրցանակին արժանացել են Մարիաննա Գրիգորյանը եւ Էդիկ Բաղդասարյանը:

Աղբյուր՝ A1Plus.am

## Թեմատիկ նյութեր

Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն, ոչ թե իրավունքի սահմանափակում» [2]
2012 թվականի ընթացքում ԼՂՀ-ի իրականացրած հետազոտությունները [3]
ԼՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում [4]
Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ [5]
Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն [6]

**Source URL:** http://www.jnews.am/node/888

**Links:**
[1] http://www.jnews.am/files/A1plusaward.jpg
[2] http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan
[3] http://www.jnews.am/jff-studies-2012
[4] http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award
[5] http://www.jnews.am/mane-asryan
[6] http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek